ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԵԴՐՈ ԶԱՐՈԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Զարոկյան,

ի պատասխան Ձեր 19.02.2024թ. գրության՝ տեղեկացվում է հետևյալը.

«Երևանի Աջափնյակի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ-ում այլ մարզաձևերի հետ միասին գործում են տարբեր տարիքային խմբերի ֆուտբոլային խմբակներ:

«Երևանի Ավանի մանկապատանեկան համալիր մարզադպրոց›› ՀՈԱԿ-ում առկա 6 մարզաձևերից մեկը ֆուտբոլն է, որը գործում է 4 տարբեր տարիքային խմբերով:

«Երևանի Արաբկիրի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ում գործում են ֆուտբոլային խմբակներ:

2024 թվականին Քանաքեռ ՀԷԿ Բանավանում նախատեսվում է կառուցել մանկական ֆուտբոլի դաշտ:

Կենտրոն վարչական շրջանի «Ղեկավարի գավաթ» խորագրով, 2024թ. նախատեսված միջոցառումների շրջանակում անցկացվում է ֆուտբոլի մրցաշար, ինչպես նաև անց է կացվում «ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների աշակերտների միջև Սպարտակիադա» մարզական միջոցառման ներհամայնքային փուլը՝ ֆուտզալ մարզաձևից: Ֆինանսավորվող ծրագրերից դուրս անցկացվում են ընկերական հանդիպումներ բակային թիմերի միջև:

Նոր Նորք վարչական շրջանի «Երևանի Ռուդոլֆ Կարապետյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց›› ՀՈԱԿ-ում անվճար հիմունքներով, քաղաքային ֆինանսավորմամբ գործում է ֆուտբոլ մարզաձևը:

«Երևանի Նորք-Մարաշի մանկապատանեկան համալիր մարզադպրոց›› ՀՈԱԿ-ում գործում է ֆուտբոլ մարզաձևը՝ երեք տարիքային խմբերով, անվճար հիմունքներով, քաղաքային ֆինանսավորմամբ:

Շենգավիթ վարչական շրջանի երեխաների միջև իրականացվելու է մանկական ֆուտբոլային մրցաշար, Երևան քաղաքի 2024թ. բյուջեով նախատեսված՝ «Առողջ սերունդ պաշտպանված հայրենիք համաքաղաքային փառատոն»-ի շրջանակներում:

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում գործում է «ՖԱ Ուրարտու» մարզական հասարակական կազմակերպության մանկապատանեկան ֆուտբոլի մարզադպրոցը, ինչպես նաև Մխիթար Սեբաստացի կրթահամալիրում գործում են տարբեր տարիքային ֆուտբոլային խմբակներ:

Էրեբունի վարչական շրջանում անվճար հիմունքներով գործում է «Երևանի Հ. Խաչատրյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՓԲԸ-ն, ինչպես նաև վարչական շրջանում անց է կացվում «ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների միջև Սպարտակիադա» մարզական միջոցառման ներհամայնքային փուլը՝ ֆուտզալ մարզաձևից: Երևան քաղաքի 2024թ. բյուջեով նախատեսված՝ «Առողջ սերունդ պաշտպանված հայրենիք համաքաղաքային փառատոն»-ի շրջանակներում վարչական շրջանի երեխաների միջև իրականացվելու է մանկական ֆուտբոլային մրցաշար:

«Երևանի Նուբարաշեն մարզամշակութային կետրոն» ՀՈԱԿ-ն ունի անվճար ֆուտբոլի խմբեր, որոնք քաղաքային ֆինանսավորմամբ են:

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ենթակայությամբ գործող ֆուտբոլային խմբեր չկան: Մասնավոր հիմունքներով գործում են «Էրզրում» և «Քանաքեռ-Զեյթուն» ֆուտբոլային ակումբները:

Դավթաշեն վարչական շրջանում մասնավոր հիմունքներով գործում է «Դավթաշեն ֆուտբոլային ակումբ» ՀԿ-ն, որը Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի անդամ է: Ակումբը մասնակցում է ՀՀ ֆուտբոլի մանկապատանեկան առաջնություններին՝ 5 տարիքային խմբերով: «Դավթաշեն ֆուտբոլային ակումբ» անվճար հաճախում են զոհված, բազմազավակ, միակողմանի ծնողազուրկ, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ